ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 28 2025 № 1

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
HISTORY

ՀՏԴ՝93.94
DOI: 10.52971/18294316-2025.28.1-23

ՄԻՋԻՆԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Ռուսլան Ա. Յականյան
ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում
Նախաբան. Միջինասորեստանյան ժամանակաշրջանը (Ք.ա. մոտ XV դարի վերջին քառորդ – X դարի 1-ին կես) նոր փուլ է Աշշուրի պետականության զարգացման գործընթացում: Ժամանակաշրջանը կարևոր անցումային փուլ է Հին Ասորեստանի «առևտրային» պետության և Նոր ասորեստանյան տերության միջև: Այս ժամանակաշրջանը բնութագրվում է սոցիալ-տնտեսական ու վարչա-քաղաքական յուրահատուկ նորամուծություններով և քաղաքական դինամիկայով: Քաղաք-պետությունից տարածքային ու տարածաշրջանային իշխանության անցնելով՝ Աշշուրը ստեղծեց քաղաքական մի կուռ համակարգ, ինչն էլ հետագայում պետք է հանդիսանար Նոր ասորեստանյան տերության (Ք.ա. մոտ 934-607/605 թթ.) քաղաքական հիմքը: Հիմնականում ուշադրության են արժանացել ներքաղաքական այն կարևորագույն գործոնները, որոնք նպաստեցին Ասորեստանի վերափոխմանը քաղաք-պետությունից՝ տարածքային թագավորության: *Մեթոդներ և նյութեր.* Հնագիտական նյութի, վարչական տեքստերի և համեմատական ուսումնասիրությունների վերլուծության միջոցով այս հետազոտությունը ուսումնասիրում է փոխկապակցված հասարակական, քաղաքական և տնտեսական համակարգերը, որոնք բնութագրում էին Միջին Ասորեստանի հասարակությանը: Աշխատանքում կիրառվել է հետազոտման պատմահամեմատական մեթոդը: Աղբյուրների ուսումնասիրության ժամանակ կիրառվել է այդ մեթոդի համադրման և հակադրման սկզբունքը: *Վերլուծություն.* Վերհանված և բնութագրված են պետական կառավարման մարմինների ձևավորման և զարգացման եղանակները, ինչպես նաև Աշշուր պետության կառավարման համակարգը: *Արդյունքներ.* Միջինասորեստանյան ժամանակաշրջանում Աշշուրը ականատես եղավ վարչաքաղաքական նորամուծություններով, ավանդական նորմերի իրավական բնութագրմամբ հասարակական-տնտեսական վերափոխված ինստիտուտ-

ների առաջացմանը: Հենց այս փոփոխություններն էին, որ հետագա դարերի ընթացքում պետք է դառնային ասորեստանյան քաղաքակրթության կարևորագույն բնութագրիչը, ինչպես նաև՝ նրա հանրության առանձնահատուկ հիմքը:

Բանալի բառեր՝ *Աշշուր, Ասորեստան, արքա, վարչական համակարգ, հասարակական և տնտեսական, նահանգ, նահանգային համակարգ, քաղաքական վերահսկողություն:*

Ինչպես հղել՝ Ցականյան Ռ. *Միջինասորեստանյան պետության վարչաքաղաքական և տնտեսական կառավարման համակարգերը* // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 1 (28): 23-34 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-23

THE ADMINISTRATIVE AND ECONOMIC GOVERNMENT SYSTEMS OF THE MIDDLE ASSYRIAN STATE

Ruslan A. Tsakanyan

The Institute of Oriental Studies of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: The Middle Assyrian Period (approximately the last quarter of the XV century BC - the first half of the X century BC) is a new stage in the development of the Assyrian State. The period is an important transitional stage between the "*merchant*" state of Old Assyria and the Neo-Assyrian Empire. This period is characterized by unique socio-economic and administrative-political innovations and political dynamics. By moving from a City-State to a Territorial and Regional Power, Aššur created a solid political system, which would later serve as the political foundation of the Neo-Assyrian Empire (c. 934-607/605 BC). The main attention has been paid to the most important domestic political factors that contributed to the Transformation of Assyria from a City-state to a Territorial Kingdom. *Methods and materials:*Through the analysis of archaeological material, administrative texts, and comparative studies, this research examines the interconnected social, political, and economic systems that characterized Middle Assyrian society. The historical-comparative research method was used in the work. The principle of comparison and contrast of this method was used when studying the sources. *Analysis:* The methods of formation and development of governing bodies in the early stages of statehood, as well as the system of governance of the Assyrian state, are revealed and characterized. *Results*: During the Middle Assyrian period, Aššur witnessed administrative and political innovations, the legal characterization of traditional norms, and the emergence of transformed socio-economic institutions. It was these changes that were to become the most important characteristic of Assyrian civilization in later centuries, as well as the distinctive basis of its society.

Key words: *Aššur, Assyria, City-State, King, Administrative System, Social and Economic Systems, Provincial System, Political Control.*

Citation: Tsakanyan R. *The Administrative and Economic Government Systems of the Middle Assyrian State* // "Scientific Works" of SCAS NAS of RA. Gyumri. 2025. V. 1(28). 23-34 pp.
DOI: 10.52971/18294316-2025.28.1-23

ՆԱԽԱԲԱՆ. Միջինասորեստանյան ժամանակաշրջանում (Ք.ա. մոտ 1416-935թթ.[1]) Աշշուրը ականատես եղավ Միջագետքի քաղաքական լանդշաֆտի զգալի վերափոխմանը: Այն բնութագրվեց Աշշուրի գլխավորությամբ ասորեստանցիների՝ որպես պետական հիմնական ուժի. համախմբմամբ և պետության տարածքի աստիճանական ընդարձակմամբ, քաղաք-պետությունից վերածվելով կենտրոնացված տարածքային ապա տարածաշրջանային պետության: Այդ ուժերի համախմբումը հիմնված էր արքայական իշխանության, վարչական կառուցվածքի և հասարակական ու տնտեսական գործոնների բարդ փոխազդեցությամբ: Ժամանակաշրջանի ներքին գործընթացների դինամիկան հասկանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել այն մեխանիզմները, որոնց միջոցով Աշշուրի արքաներն աստիճանաբար ընդլայնվող իրենց տիրույթներում փորձում էին հասարակության կայունության, այլ համայնքների ինտեգրման և վերահսկման միջոցով բարելավել հզորացող երկրի հասարակական ու տնտեսական մարտահրավերները: Այս ժամանակահատվածում սկսում է ընգծվել պետության ներքին քաղաքականության մի շարք առանձնահատկություններ՝ արքայի դերի ու նրա հոգևոր ընկալումների աստիճանական վերելքը, նահանգային կառավարման համակարգի զարգացումը և այս ու այլ գործոնների ազդեցությունը հասարակական կարգի վրա:

1. **Պատմական հետնախորքը և աղբյուրները**

Ասորեստանի պատմության Միջինասորեստանյան ժամանակաշրջանն իր հիմքերը դրեց Աշշուր-բել-նիշեշուի (Ք.ա. մոտ 1416-1408թթ.) կառավարման ժամանակահատվածում: Երբ վերականգնվեցին միտաննացիների կողմից ավերված Աշշուր քաղաքի պաշտպանական պարիսպները և Կասսիտական Բաբելոնիայի հետ կարգավորեցին միջպետական հարաբերությունները [2, էջ 16; 1, էջեր 20-21]: Աշշուր-ուբալլիտ I-ի (Ք.ա. մոտ 1362-1327թթ.) կառավարման ընթացքում Աշշուրը ոչ միայն դուրս եկավ իր սահմաններից և անցավ հարձակման, այլև սկսեց միջամտել հարևան երկրների ներքին գործերի [10, p. 61ff.; 34, 725ff.; 1, էջ 22; 18, p. 9f; 13, p. 40ff.]՝ Աշշուր-ուբալլիտ I-ի հաջորդների, և մասնավորապես՝ Ադադ-նիրարի I (Ք.ա. մոտ 1304–1273թթ.), Շուլմանու-աշարեդ (Սալմանասար) I (Ք.ա. մոտ 1272-1243թթ.) և Թուկուլտի–Նինուրտա I (մ.թ.ա. մոտ 1242-1206 թթ.) կառավարման ժամանակաշրջանում հասնելով իր հզորության գագաթնակետին [22, p. 592; 17, p. 38ff.]:

Միջինասորեստանյան ժամանակաշրջանի վարչաքաղաքական, հասարակական և տնտեսական համակարգերի մասին մեր հիմնական տեղեկությունները քաղում ենք Աշշուրի, Կար-Թուկուլտի-Նինուրտայի, Շիբանիբայի, Թել Ռիմախի, Դուր-Կուտլիմմուի, Թել Խուրեայի, Թել Սաբի Աբյադի և այլ հնավայրերից հայտնաբերված բազմաթիվ վարչական, տնտեսական ու մասնավոր սեպագիր տեքստերից: Թեմայի առումով մասնավորապես հիշատակելի են.

ա) պալատական կառավարմանը վերաբերող վարչական նյութեր՝ Աշշուրի «M 7» (Սին-Շամաշի և Իշտարի տաճարների միջև) [32; 33; 11; 31, pp. 147-176; 28, 81ff.; 27, pp. 68-81] և Կար-Թուկուլտի-Նինուրտայի պեղավայրերից [6],

[1] Թվագրումների համար մանրամասն տե՛ս՝ [2]:

բ) նահանգային տնտեսական վարչարարությանը վերաբերող նյութեր՝ Դուր-Կուտլիմմույից [20; 31, pp. 298-326; 5; 28, p. 94ff.],

գ) գյուղատնտեսության և գյուղատնտեսական աշխատանքների վերաբերյալ անգնահատելի տեղեկություններ է հաղորդում Թել Սաբի Աբյադի հնագիտական արխիվը [24, pp. 89-126; 39, pp. 171-232; 28, p. 100ff.],

դ) Միջինասորեստանյան օրենքները, որոնք ուրվագծում են հասարակական ու տնտեսական հարաբերությունները կարգավորող իրավական դաշտը [3, էջեր 230-263]:

2. Արքան և պալատական վարչակազմը

2.1.1. Արքայական իշխանությունը, գաղափարախոսությունը և տիտղոսների էվոլյուցիան

Միջինասորեստանյան պետության գլուխ կանգնած էր աշխարհիկ և հոգևոր իշխանությամբ օժտված արքան՝ «**šar māt Aššur**» : Այս ժամանակաշրջանում նկատվում էր արքայական իշխանության կենտրոնացման միտումը: Վերջինիս նպաստեց բյուրոկրատական ապարատի զարգացումը և ստանդարտացված վարչական պրակտիկայի ներդրումը:

Աշշուրի տիրակալները նախապես կրում էին **išši'akkum**՝ «*Աշշուրի* (աստծո - Ռ.Ց.) *փոխանորդ, տեղապահ*»՝ «***išši'ak Aššur***.KI» [2, էջ 7; 9, pp. 21-22, p. 24ff.; 16, p. 144f.] տիտղոսը: Արքայական իշխանությունը գաղափարաբանական և կրոնական նկատառումներից ելնելով՝ աստիճանաբար անցում կատարեց առավել համապատասխան մակդիրների՝ «**šar māt Aššur**», «**šarru rabû**» (*մեծ արքա*) և «**šarru dannu**» (*ուժեղ արքա*), և այլ [37; 36; 35]: Օր-օրի հզորացող Աշշուրի պետության համար այս փոփոխությունները արտացոլում էին իշխանության աճող կենտրոնացումը և արքայական գերակայության հաստատումը: Այն, որ արքայական տիտղոսների ու մակդիրների կիրառումը հանդես է եկել որպես քաղաքական իշխանությունը հավաստող գործիք՝ անժխտելի է: Աշշուրի արքաները և մասնավորապես՝ Թուկուլտի-Նինուրտա I-ը (Ք.ա. մոտ 1242-1206 թթ.), օգտագործում էին այնպիսի մակդիրներով տիտղոսներ, որոնք ընդգծում էին նրանց հսկայական տարածքային վերահսկողությունը՝ արտացոլելով ժամանակաշրջանի նվաճողական քաղաքականությունն ու նրա արդյունքները [16; p. 143f.; 37]:

2.1.2. Արքայի հոգևոր իշխանությունը

Աշշուրի արքան կենտրոնական դեր է խաղացել կրոնական գաղափարախոսության ոլորտում՝ հանդես գալով որպես Աշշուր աստծո տեղապահ և, ըստ երևույթին, որպես Աշշուրի գլխավոր քուրմ՝ **šangû** [26, pp. 195-224; 2, էջ 7; 28, p. 202ff.]: Ասորեստանի արքայի կողմից «**šangû**» տիտղոսն օգտագործելու հայտնի ամենավաղ վկայությունը գալիս է Ադադ-նիրարի I-ի արձանագրությունից՝ «18. **šangû.sīru ša Enlil** … 19. **šâkni Enlil iššaku Aššur**»՝ «18. *Էնլիլի վեհագույն քուրմ* … 19. *Էնլիլի տեղապահը, նշանակված Աշշուրի կողմից*» [13, A.0.76.1; A.0.76.14:1-3; 15:1-4; 17:1-3; 16, p. 143] Աստծո և արքայի միջև կապը ապահովում էր արքայական իշխանության օրինականության ամենակարևոր աղբյուրը: Արքայի կրոնական պարտականությունները, ներառյալ տաճարների կառուցումն ու վերջիններիս ընծաների մատուցումը՝ աստիճանաբար ամրապնդում էին աստվածների և աշշուրցիների միջև նրանց միջնորդ դերը [26; 16, p. 144f.]: Արքան խորապես միահյուսված էր կրոնական հաստատությունների ու հավատալիքների հետ: Աշշուրը

աստվածային օրինականություն էր ապահովում արքայական իշխանության համար, իսկ արքան ծառայում էր որպես Աշշուր սստծո երկրային ներկայացուցիչ [29, p. 219ff.]:

Վարչական տեքստերը և արքայական արձանագրությունները բացահայտում են պետական նշանակալի ներդրումները տաճարաշինության և ծիսական գործունեության մեջ: Տաճարները գործում էին ոչ միայն որպես կրոնական կենտրոններ, այլ նաև որպես տնտեսական հաստատություններ, որոնք մասնակցում էին գյուղատնտեսական արտադրությանը, արհեստագործական մասնագիտացմանը և առևտրային ցանցերին՝ հետագայում ինտեգրելով կրոնական և քաղաքական իշխանությունը [21,p. 82ff.]: Արքայի մասնակցությունը կրոնական ծեսերին ամրապնդեց նրա դիրքերը ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր հիերարխիայի գագաթնակետում: Տեքստերը փաստում են արքայական մասնակցությունը հիմնական կրոնական տոներին, մասնավորապես **akītu** (ամանորյա) փառատոնին, որը վերահաստատում էր տիեզերական կարգը՝ կենտրոնում ունենալով արքային [29, p. 416ff.]: Մոնումենտալ տաճարների և պալատների կառուցումը ծառայում էր ինչպես գործնական վարչական գործառույթներին, այնպես էլ գաղափարական նպատակներին՝ ֆիզիկապես դրսևորելով աստվածային և արքայական իշխանության սերտաճումը: Աշշուրի և Կար-Թուկուլտի-Նինուրտայի հնագիտական արտեֆակտները ցույց են տալիս ուժի այս ճարտարապետական արտահայտություններին հատկացված զգալի ռեսուրսները [25]:

Աշշուրի միապետը զգալի իշխանություն էր իրականացնում՝ հանդես գալով որպես գերագույն դատավոր (**da"ānu**), զորքերի գերագույն հրամանատար (**turtānu**) և վարչարար: Այդ ժամանակաշրջանի արքայական արձանագրություններում ընդգծված է թագավորի դերը արդարություն սերմանելու և տարածելու, ռազմարշավներ իրականացնելու և շինարարական նախագծերը վերահսկելու գործում [13, A.0.78]: Այնուամենայնիվ, գործնականում կառավարումը պահանջում էր էական բյուրոկրատական ապարատի անհրաժեշտություն:

2.2. Վարչաքաղաքական կառուցվածքն ու կառավարումը

2.2.1. Պալատական վարչությունները

Աշշուրի տարածքային ընդլայմանը զուգընթաց՝ նորանվաճ տարածքներում ձևավորվող նոր նահանգների արդյունավետ կառավարման անհրաժեշտություն էր առաջանում: Նվաճված նահանգների նկատմամբ իրականացվող վերահսկողության աստիճանը տարբերվում էր. որոշ շրջաններ պահպանեցին նախկինում գոյություն ունեցող տեղական կառույցների տարրեր, ինչը որոշակի պրագմատիկ կառավարման ցուցիչ է հանդիսանում [4; 22]:

Երկիրը ղեկավարվում էր արքայական պալատից (**ekallu**), որտեղ գտնվում էին նաև աշշուրական ազնվականներից կազմված գործադիր և խորհրդակցական մարմինները:Նույն **ekallu** եզրույթը կիրառելի էր նաև ցանկացած նահանգային վարչական կենտրոնի համար [19]: Պալատական վարչակազմում նվազեցված էր արքայի կնոջ՝ թագուհու՝ «**aššat šarre**»-ի կամ պալատի ցանկացած կնոջ՝ **sinniltu ša ekalle՝** դերը [16, p. 148]:

Պալատի վարչակազմում ամենաբարձրաստիճան պաշտոնյան էր **sukkallu rabû**-ն (*մեծ վեզիր*) [34, pp. 753, 765; 15, p. 55ff.; 31, p. 203], որը հաճախ կրում էր «**sukkallu rabû ša**

māt Aššur» (*Աշշուրի երկրի մեծ վեզիր*) տիտղոսը, որի ենթակայության տակ գործում էր նաև **sukkallu šanû**-ն (երկրորդ կարգի վեզիր) [15, p. 55]: Այս պաշտոնը երբեմն զբաղեցնում էին արքայական ընտանիքի անդամները [15, p. 55ff., 64; 31, p. 203; 6, pp. 210-222]: Պալատական վարչակազմի մյուս հիմնական պաշտոնյաներն էին՝

ա) **rab ekalle** (հաճախ նաև՝ **ša muḫḫi ekalle** կամ **ukil ekalle** – արքունի գլխավոր ծառայապետը, պալատական վարչության համակարգողը) [16, p. 148 հմմտ.՝ 15, p. 74ff.],

բ) **masennu rabû** (գլխավոր գանձապահ, գլխավոր տնտես)՝ վերահսկում էր երկրի գանձարանը, տնտեսական ռեսուրսները, հարկերի ու տուրքերի հավաքագրումը [15, p. 94ff.; 31, p. 203],

գ) **rab šāqê** (գլխավոր մատռվակ)՝ չնայած պաշտոնի արտաքնապես կենցաղային բնույթին ու ենթատեքստերին՝ այն գործում էր որպես բարձրաստիճան զինվորական և վարչական պաշտոնյա [15, p. 92ff.],

դ) **ša reš šarre** կամ **rab ša reši** (արքայի ներքինապետ կամ գլխավոր ներքինապետ)՝ Միջինասորեստանյան ժամանակահատվածում պաշտոնի կիրառման վերաբերյալ Ս. Յակոբը նշում է, որ այնպես ինչպես **rab ša reši,** այնպես էլ **manzaz pāni** պաշտոնների գործառույթների վերաբերյալ դեռևս չկա միանշանակ կարծիք [16, p. 148; հմմտ. 15, pp. 82-92],

ե) **nāgir ekalle** (պալատական մունետիկ)՝ լայն լիազորություններով օժտված մունետիկները ղեկավար պաշտոններ էին զբաղեցնում պետական ապարատի բուրգում և բանակում [16, p. 148; 15, pp. 67-72],

զ) **bēl pāḫete** (նահանգապետ)՝ նահանգային մակարդակով ամենաբարձրաստիճան պաշտոնյան է: Որպես pāḫutu միավորի վարչական ղեկավար՝ նա իր լիազորությունների շրջանակներում գործում էր համեմատաբար անկախ, սակայն պատասխանատու էր պալատական վարչության, մասնավորապես՝ sukkallu rabû-ին և գտնվում էր նրա անմիջական ենթակայության ներքո: Նահանգապետներին իրավասու էին թագի անունից հրահանգներ տալ նաև արքայական ներկայացուցիչները՝ **qēpūtu** [15, p. 148; 31, p. 375f.; 14, pp. 111-131],

է) **rab zāriqē** (պալատի գլխավոր վերակացու, հսկիչ) [15, p. 148; 17, pp. 78-82],

ը) **ṭupšar šarre** կամ **rab ṭupšarre** (արքայական գրագիր կամ գլխավոր գրագիր), որը ղեկավարել և համակարգել է բյուրոկրատական գործունեության համար անհրաժեշտ բոլոր հրամանները, զեկուցագրերն ու կարգադրությունները [15, pp. 235-261]:

Խիստ կարևոր էին նաև **šakin māte** կամ **šakin māt Aššur** (երկրի, Աշշուր երկրի կառավարիչ) [23, p. 88ff.], և մի շարք այլ պաշտոնյաններ, որոնց մասին ստորև:

2.2.2. Նահանգային կառավարումը

Ինչպես արդեն վերը նշվեց՝ Միջինասորեստանյան ժամանակաշրջանում ի հայտ եկավ նահանգային բարդ համակարգը, ըստ որի՝ նվաճված տարածքները բաժանվեցին մանր ու միջին վարչական միավորների: Վերջիններս ղեկավարվում էին արքունիքի նշանակած կառավարիչների կողմից: Նահանգային այս համակարգը ներառում էր և՛ աշշուրական կենտրոնը (**māt Aššur**), և՛ նվաճված տարածքները, թեև վարչարարական գործառույթները տարբերվում էին կենտրոնական և ծայրամասային շրջանների միջև [30, p. 252ff.]: Նահանգների կառավարիչները (**bēl pāḫete** կամ **šaknu**) իրենց նշանակված

տարածքներում ծառայում էին որպես արքայական ներկայացուցիչներ: Փաստացի, նոր քաղաքականության տարբերակիչ առանձնահատկությունը նահանգային կառավարման համակարգված զարգացումն էր: Նշանակված պաշտոնյաների կողմից կառավարվող նահանգների ստեղծումը սահմանեց թագավորական անմիջական վերահսկողություն նվաճված տարածքների վրա [30, p. 252ff.]: Վարչական այս նորամուծությունը տարբերվում էր ավելի վաղմիջագետքյան մոտեցումներից նրանով, որ այն ուղղակիորեն ինտեգրում էր նվաճված տարածքները աշշուրական պետության կառուցվածքին, այլ ոչ թե պարզապես անուղղակի կառավարման միջոցով տուրք կորզում [22]:

Իրենց վստահված տարածքներում **bēl pāḫete**-ները պատասխանատու էին և իրականացնում էին.

ա) կարգի և անվտանգության պահպանում,

բ) հարկերի և տուրքերի հավաքագրում,

գ) պետական նախագծերի համար աշխատանքի կազմակերպում,

դ) արքայական հրահանգների իրականացում,

ե) դատական գործառույթների իրականացում իրենց վստահված նահանգներում:

2.2.3. Վարչական շրջանները

Ժամանակի ընթացքում, ռազմաքաղաքական նկատառումներից և անվտանգության պահպանումից ելնելով, նահանգային իշխանության վերահսկողության ներքո նահանգները բաժանվեցին ավելի փոքր վարչական շրջանների (**ḫalṣu**): Այս շրջանները վերահսկվում էին շրջանի ղեկավարների (**rab ḫalṣi**) կողմից և գտնվում էին **bēl pāḫete**-ների անմիջական վերահսկողության տակ [23, p. 88 ff.; 15, p. 166-169]: Նահանգներն ավելի փոքր վարչաքաղաքական շրջանների վերածելն ու նշանակովի պաշտոնյաների կառավարման հանձնելը, իհարկե, նահանգապետերի անմիջական ենթակայության տակ, նպաստեցին առավել արդյունավետ ու անմիջական կառավարմանը, գյուղատնտեսական շրջաններում ռեսուրսների առավել արդյունավետ բաշխմանն ու հավաքագրմանը [39] և այլն: Իհարկե պետք չէ նաև բացառել, որ շատ հաճախ հնարավոր է, որ **rab ḫalṣi**-ի միջոցով արքան փորձեր վերահսկել և հարկ եղած դեպքում արդյունավետ գործել **bēl pāḫete**-ների ցանկացած հակապետական միջոցառման դեմ:

Հնագիտական և տեքստային վկայությունները Միջին Ասորեստանի տարածքային համայնքում բացահայտում են հիերարխիկ կառուցվածք.

ա) Կենտրոնական բնակավայր (**ālu dannu** - «ուժեղ քաղաք»)՝ հիմնական վարչական կենտրոնը, որը սովորաբար ընդգրկում էր հասարակական շենքեր, պահեստային տարածքներ և երբեմն՝ պաշտպանական կառույցներ:

բ) Դուստր բնակավայրեր (**kapru** կամ **dimtu**)՝ համայնքի տարածքում գտնվող գյուղատնտեսական փոքր համայնքներ:

գ) Համայնքային ժողով (**puḫru**)՝ Խորհուրդ, որը բաղկացած է տնային տնտեսությունների ղեկավարներից կամ հիմնադիր բնակավայրերի ներկայացուցիչներից:

դ) Ղեկավարներ (**rab ālāni** - «քաղաքների/բնակավայրերի ղեկավար»)՝ վարչական պաշտոնյաներ, որոնք միջնորդներ են եղել համայնքային և կենտրոնական իշխանության միջև:

2.2.4. Բանակը որպես տարածքային վերահսկողություն գործիք

Միջինասորեստանյան բանակը ծառայում էր և՛ որպես նվաճող ուժ, և՛ որպես տարածքային վերահսկողության գործիք: Ադադ-Նիրարի I-ի կառավարման շրջանից մինչև Թուկուլտի-Նինուրտա I-ը աշշուրական արքաների ռազմարշավների արդյունքում Աշշուրի տարածքը զգալիորեն ընդլայնվեց, և, բնականաբար, պետք էին արդյունավետ գործիքներ այդ տարածքները կառավարելու համար: Իսկ նման արդյունավետ գործիք կարող էր առաջին հերթին լինել բանակը: Բանակը, ամենայն հավանականությամբ, ղեկավարում էր **ta/urtānu rabi'u**-ն (գլխավոր հրամանատար, դաշտային հրամանատար) կամ արքան [16, p. 152f.; 15, p. 191ff.]: Զինվորական հիերարխիան սերտորեն ինտեգրված էր վարչական համակարգին: Նահանգների կառավարիչները ղեկավարում էին տեղական ուժերը, մինչդեռ մասնագիտացված զինվորական պաշտոնյաները (**kiṣir šarri** կամ «արքայական գունդ/ստորաբաժանում») պահպանում էին արքայական իշխանությունը ռազմավարական վայրերում [15, p.191ff.]: Ս. Յակոբը ակնհայտ է համարում, որ Միջինասորեստանյան ժամանակաշրջանում բացի **kiṣir šarri**-ից մշտական բանակ չի եղել [16, p. 152]:

Նվաճված տարածքների նկատմամբ վերահսկողություն պահպանելու համար կիրառվել է մի շարք միջոցառումներ՝

ա) Ռազմավարական բնակավայրերի ստեղծում: Նվաճված տարածքներում գաղութների և վարչական կենտրոնների ստեղծումն ապահովում էր անմիջական վերահսկողություն [19]:

բ) Զանգվածային տեղահանության և վերաբնակեցման քաղաքականության կիրառում: Միջինասորեստանյան արքաները նախաձեռնեցին նվաճված բնակչության զանգվածային տեղահանության և վերաբնակեցման քաղաքականության պրակտիկան: Այս քաղաքականությունը, որը կընդլայնվի Նորասորեստանյան ժամանակաշրջանում, խաթարեց նվաճված բնակչության հավանական դիմադրությունը և աշխատուժ ապահովեց գյուղատնտեսական և շինարարական նախագծերի համար [38]:

գ) Ենթակառուցվածքի զարգացում. արքայական արձանագրությունները փաստում են ճանապարհների, ամրությունների և վարչական շենքերի կառուցումը, որոնք հեշտացնում էին զորքերի հաղորդակցությունն ու տեղաշարժը ողջ տարածքում:

դ) Գաղափարախոսական հսկողություն. արքայական արձանագրություններն ու հուշարձանները վկայում են աշշուրական ռազմական ուժի ու աստվածային իշխանության օգտագործումը որպես գերիշխանության տեսանելի վկայություն նվաճված տարածքներում: Նման տարածքներում ծիսական ներկայացումների և ճարտարապետական արտահայտությունների միջոցով արքայական կրոնական քարոզչությունը ամրապնդեց արքայի քաղաքական հեղինակությունը [29, pp. 28, 417]:

3. Տնտեսական կառավարումը

3.1. Ռեսուրսների արդյունահանում

Ռազմական արշավները վճռորոշ դեր խաղացին Միջին Ասորեստանի տնտեսական և քաղաքական կյանքում: Նվաճումների միջոցով ռեսուրսների ձեռքբերումը նպաս-

տեց պետության հարստությանը և ապահովեց հզոր բանակ պահելու միջոցներ[2]: Մշակվել էին տարածքներից ռեսուրսներ հանելու բարդ համակարգեր: Վարչական տեքստերը ներկայացնում են հարկման մի շարք ձևեր.

ա) Գյուղատնտեսական արտադրություն. Գյուղատնտեսական հարկերը կազմում էին պետության տնտեսական ողնաշարը: Նահանգային կենտրոնների գրառումները փաստում են հացահատիկի, ձեթի և այլ գյուղատնտեսական ապրանքների հավաքագրումն ու վերաբաշխումը [30, p. 259]:

բ) Աշխատանքային ծառայություն. Համակարգը ենթականերից պահանջում էր պետական նախագծերի կամ զինվորական ծառայության հետ կապված աշխատանք [5, S. 25]:

գ) Հարկ և տուրք. Նվաճված տարածքները հարկվում էին հաճախ թանկարժեք մետաղների, փայտանյութի, ձիերի կամ մասնագիտացված ապրանքների տեսքով: արքայական արձանագրությունները հաճախ թվարկում են տուրքի վճարումները՝ որպես քաղաքական հնազանդության դրսևորում [13]:

Միջինասորեստանյան պետությունը համակարգված հողի կառավարման քաղաքականություն էր իրականացնում, որը բարձրացնում էր գյուղատնտեսության արտադրողականությունը՝ միաժամանակ ուժեղացնելով պետական վերահսկողությունը: Վարչական տեքստերը փաստում են հողերի մի քանի կատեգորիաներ.

ա) արքունական հող. ուղղակիորեն վերահսկվում է պալատի կողմից և աշխատում է պարտադիր աշխատանքի կամ վարձակալության պայմանագրերի միջոցով,

բ) տաճարային հող՝ նվիրված կրոնական հաստատություններին, տնտեսություններին աջակցելուն,

գ) սպասարկման հողատարածք. հատկացվում է պաշտոնյաներին և պետական ծառայողներին՝ պետությանը սպասարկելու դիմաց,

դ) համայնքային հող. կառավարվում էր տեղական համայնքների կողմից, բայց ենթակա էր հարկման:

«Ծառայողական հողի» (**ilku**) հատկացումը պաշտոնյաներին և զինվորներին ստեղծեց պետական ապարատից կախյալների դաս, որոնց տնտեսական բարեկեցությունը հիմնված էր շարունակական ծառայության և թագի նկատմամբ հավատարմության վրա [31, pp. 159, 260, 268, 339]: Այս համակարգը, որը հաստատված է Դուր-Կուտլիմմուի և այլ նահանգային կենտրոնների տեքստերում, թույլ էր տալիս պետությանը պարգևատրել ծառայության դիմաց՝ չսպառելով գանձապետական ռեսուրսները, միաժամանակ պահպանելով հողի բաշխման վերահսկողությունը:

3.2. Հողի կառավարում

Պալատի կողմից կառավարվող գյուղատնտեսական հողերի մի քանի կատեգորիաներ գոյություն ունեին.

ա) **ṣibtu**-հողը հատկացվում էր պաշտոնյաներին և կախյալ անձանց՝ որպես ծառայության դիմաց փոխհատուցում,

բ) **pilku**-աշխատանքային ընդհանուր պարտականությունների դիմաց հատկացվող հող,

[2] Gaspa S. 2020, The Assyrian King as a Warrior: Legitimacy through War as a Religious and Political Issue from Middle Assyrian to Neo-Assyrian Times, 113-155

գ) **šibšu** - պալատի նկատմամբ հարկային պարտավորությունների վճարման ենթակա հող:

Նոր նվաճված տարածքներում, արքայի կողմից նշանակված կառավարիչներն անմիջական վերահսկողություն էին իրականացնում զգալի գյուղատնտեսական կալվածքների վրա, որտեղ հողերը հաճախ վերակազմավորվում էին և ընդգրկվում արքայապատկան հողատիրության ցանկում: Թել Սաբի Աբյադի փաստաթղթերը ցույց են տալիս, որ պալատական կառավարիչները մանրամասն գրառումներ են կատարել հողի արտադրողականության, բերքատվության և աշխատուժի հատկացումների վերաբերյալ [39]:

Համայնքային հողերն էլ իրենց հերթին կառավարվում և բաշխվում էին՝

ա) համայնքային հողերի (**qaqqaru ša ālāni** - «բնակավայրերի հող»). կոլեկտիվ կառավարվող հողեր, որոնք սովորաբար ներառում են արոտավայրեր և չմշակվող տարածքներ [տես և հմմտ.՝ 40, 24ff., 42ff.],

բ) հատկացված հողերի (**zittu** - «բաշխել, կիսել»). համայնքի անդամներին մշակման համար հատկացված տարածքներ,

գ) թագապատկան հողերի (**qaqqaru ša šarr**i - «արքայի հող»). համայնքի անդամները հաճախ աշխատում էին արքայական կալվածքներում՝ կատարելով ծառայողական պարտականություններ [տես և հմմտ.՝ 5, S. 100; 40, 24ff., 42ff.]:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Միջինասորեստանյան ժամանակաշրջանում պետական ներքին քաղաքականությունը բնութագրվում էր արքայական իշխանության, վարչական նորարարության և սոցիալ-տնտեսական գործոնների դինամիկ փոխազդեցությամբ: Այս ժամանակաշրջանի արքաները հմտորեն ամրապնդեցին իրենց իշխանությունը, ընդլայնեցին իրենց տարածքները և հաստատեցին քաղաքական համակարգ, որը մնայուն ժառանգություն թողեց Հին Մերձավոր Արևելքում:

Քաղաքական, կրոնական և տնտեսական ինստիտուտների փոխկախվածությունը ստեղծեց կայուն պետական կառույց, որը հիմք դարձավ հետագա Նորասորեստանյան կայսրության համար:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Ցականյան Ռ.** *Միջինասորեստանյան տերության արտաքին և ներքին քաղաքականության որոշ հարցերի շուրջ* // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ: 2018, № XXXI, 19-33 էջեր:
2. **Ցականյան Ռ.** *Աշշուրի պետությունը մ.թ.ա. III հազարամյակի սկզբներից մինչև մ.թ.ա. XV դարի վերջերը* // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 2 (26), 5-22 էջեր:
3. **Ցականյան Ռ.** *Աշշուրուհին ըստ միջինասորեստանյան օրենքների* // «Կինն Արևելքում», № 2, 2023, 230-264 էջեր:
4. **Brown B.** *The Structure and Decline of the Middle Assyrian State: The Role of Autonomous and Nonstate Actors* // Journal of Cuneiform Studies, № 65, 2013, 97-126 pp..
5. **Cancik-Kirschbaum E.** *Die mittelassyrischen Briefe aus Tall Šēḫ Ḥamad*. vol. 4; texts, 1. Berlin: Dietrich Reimer Verlag, 1996. x1 + 245 pp,, 46 plates.
6. **Cancik-Kirshbaum E.** *Nebenlinien des assyrischen Königshauses in der 2. Hälfte des 2. Jts. v. Chr.* // Altorienta lische Forschungen, № 26, 1999, 210-222ss..
7. **Eickhoff T.** *Kār Tukulti-Ninurta. Eine mittelassyrische Kult- und Residenzstadt,* Abhandlungen der Deutschen Orientgesellschaft 21. Berlin: MANN, 1985. XVIII+98 p.
8. **Faist B.** *Kingship and Institutional Development in the Middle Assyrian Period* // G.B. Lanfranchi and R.Rollinger (eds.), Concepts of Kingship in Antiquity, Padova: S.A.R.G.O.N., 2010, 15–24 pp..

9. **Fink S., Sazonov V.** *The 12th Century Collapse and Assyria Turning Point or "Usual Crisis"* // Responses to the 12th Century BC Collapse: Recovery and Restructuration in the Early Iron Age Near East and Mediterranean: Proceedings of the 9th Melammu Workshop, Tartu, 7–9 June 2019, Edited by Mait Kõiv and Raz Kletter, Melammu Workshops and Monographs 10, 2024, 19-46 pp..
10. **Frahm E.** *Assyria: The Rise and Fall of the Wo*pp.*rld's First Empire*. New York. 2023. 528 p..
11. **Freydank H**. *Mittelassyrische Rechtsurkunden und Verwaltungstexte* (MARV, I), VS NF III (XIX), Akademie Verlag, Berlin, 1976, 68 p.
12. **Gaspa S.** 2020, *The Assyrian King as a Warrior: Legitimacy through War as a Religious and Political Issue fromMiddle Assyrian to Neo-Assyrian Times* // Societies at War, Melammu Symposia 10, ed. by R. Rollinger und S. Ponchia, Österreichischen Akademie der Wissenschaften, 2020, 113-155 pp..
13. **Grayson A.** *The Assyrian Rulers of the Third and Second Millennium BC (to 1115 BC)*, The Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Periods, Vol. I, Toronto-Buffalo-London. 1987. XXII-355 p.
14. **Harrak A.** *Assyria and Hanigalbat: A Historical Reconstruction of Bilateral Relations from the Middle of the Fourteenth to the End ofthe Twelfth Centuries B.C.*,Texte und Studien zur Orientalistik. G. Olms Verlag, 1987, 315p.
15. **Jakob S.** *Mittelassyrische Verwaltung und Sozialstruktur*: Untersuchungen. Leiden: Brill. 2003, 587 p..
16. **Jakob S.** *Economy, Society, and Daily Life in the Middle Assyrian Period* // In Frahm, E. (ed.), A Companion to Assyria. Malden, MA: Wiley-Blackwell. 2017. 143–160 pp.
17. **Kertai D**. *The History of the Middle-Assyrian Empire* // TALANTA XL-XLI, 2008-2009, 25-51 pp..
18. **Koliński R.** *Making Mittani Assyrian, in Understanding Hegemonic Practices of the Early Assyrian Empire*//Essays dedicated to Frans Wiggermann (PIHANS 125), B. S. During (ed.), Leiden, 2015, 9-32 pp..
19. **Kühne H.** *Tall Šēḫ Ḥamad—Dūr-Katlimmu* // G. Bunnens (Ed.), A New Companion to the Ancient Near East. Hoboken: Wiley-Blackwell, 2018, 399-418 pp..
20. **Kühne H.,** Hrs., *Die Zitadelle von Dūr-Katlimmu in mittel- und neuassyrischer Zeit*. Teil. 1: Text, Teil. 2: Katalog, Teil. 3: Illustrationen. Berichte der Ausgrabung Tall Šēḫ Ḥamad/Dūr-Katlimmu 12.1 Wiesbaden: Harrassowitz, 2021. 758p.
21. **Lambert W.** *The God Aššur* // Iraq, № 45(1), 1983, 82-86 pp..
22. **Llop J.** *The Creation of the Middle Assyrian Provinces* // Journal of the American Oriental Society, № 131(4), 2011, 591-603 pp..
23. **Llop J.** *The Development of the Middle Assyrian Provinces* // Altoriental. Forsch., Akaderoie Verlag, 2012, 39/1, 87-111 pp..
24. **Lyon J.** *Middle Assyrian Expansion and Settlement Development in the Syrian Jazira: The View from the Balikh Valley* // Rainfall and Agriculture in Northern Mesopotamia. Proceedings of the Third MOS Symposium (PIHANS 88). 2000. Ed. R. M. Jas., Leiden, 89–126 pp..
25. **Miglus P.** *Festungswerke von Assur im 2. Jahrtausend v. Chr.* // S. Maul & N. Heeßel (Eds.), Assur-Forschun-gen. Wiesbaden: Harrassowitz, 2010, 211-244 pp..
26. **Parpola S.** *The King as Priest* // The King as a Nodal Point of Neo-Assyrian Identity, Ed. by J. Bach and S. Fink, Kasion, Band 8, Münster, 2022, 195-224 pp..
27. **Pedersén O.** *Archives and Libraries in the City of Assur. A Survey of the Material from the German Exca-vations*.Part 1.Acta Uneversitatis Upsaliensis. Studia Semitica 6, Uppsala, Almqvist & Wiksell, 1985, 125p.
28. **Pedersén O.** *Archives and Libraries in the Ancient Near East, 1500-300 B.C.*, Museum of Archaeology and Anthropology, Bethesda, Md: CDL Press, 1998, XXII + 291 p.
29. **Pongratz-Leisten B.** Religion and Ideology in Assyria. Studies in Ancient Near Eastern Records, vol. 6. Boston: De Gruyter, 2015, XIV+553 p.
30. **Postgate J.** *The Land of Assur and the Yoke of Assur* // World Archaeology, № 23(3), 1992, 247-263 pp..
31. **Postgate J.** *Bronze Age Bureaucracy: Writing and the Practice of Government in Assyria*. Cambridge: Cambridge University Press. 2013, XI+484 p.
32. **Prechel D., Freydank H.** *Mittelassyrische Rechtsurkunden und Verwaltungstexte X*, Mit einem Beitrag zu den Siegelabrollungen von Barbara Feller, Wissenschaftliche Veröffentlichungen der Deutschen Orient-Gesellschaft 134, Wiesbaden 2011, p. X + 85, + 9 Tafeln.

33. **Prechel D., Freydank H.** *Urkunden der königlichen Palastverwalter vom Ende des 2. Jt. Chr. Das "ArchiAssur 21101 (M7 F)*, Studien zu den Assur-Texten 5, Wiesbaden, 2014. XII + 145 p., + 6 Tabellen
34. **Reculeau H**. *Assyria in the Late Bronze Age* // The Oxford History of the Ancient Near East, Editors: Radner K., Moeller N. and Potts D. T., Volume 3: From the Hyksos to the Late Second Millennium BC. Oxford. 2022. 707-800 pp..
35. **Sazonov V.** *Die mittelassyrischen, universalistischen Königstitel und Epitheta Tukultī-Ninurtas I. (1242–1206)*//T.R. Kämmerer (ed.): Acta Antiqua Mediterranea et Orientalia. Identities and Societies in the Ancient East-Mediterranean Regions. Comparative Approaches. Henning Graf Reventlow, Memorial Volume. Alter Orient und Altes Testament 390/1. Münster. 2011, 235–276 pp..
36. **Sazonov V.** *Einige Bemerkungen zur frühmittelassyrischen Königstitulatur* // T.R. Kämmerer (ed.): Identities and Societies in the Ancient East-Mediterranean Regions Comparative Approaches. Alter Orient und Altes Testament 390/3. Münster. 2015, 155–176 pp..
37. **Sazonov V.** *Die assyrischen Königstitel und – epitheta von den Anfängen bis zu Tukulti-Ninurta I. und seinen Nachfolgern*. State Archives of Assyria Studies XXV, The Neo-Assyrian Corpus Project, Eisenbrauns, Winona "
38. Tsakanyan R. *Tiglath-Pileser III (745-727 B.C.): Mass Deportations and Resettlements Policy in Assyria* //Բանբեր Հայագիտության, 2018, № 1, 116-136 pp..
39. **Wiggerman F**. Agriculture in the Northern Balikh Valley: The Case of Middle Assyrian Tell Sabi Abyad. In Rainfall and Agriculture in Northern Mesopotamia. Proceedings of the Third MOS Symposium (PIHANS88). 2000. Ed. R. M Jas.,Leiden, 171–23 pp..
40. **Zaccagnini C.** *The Rural Landscape of the Land of Arraphe*, Isciituto di Studi del Vicino Oriente, Roma, Quaderni di Geografia Storica, 1979, 201 p.

R e f e r e n c e s

1.**Ts'akanyan R.** "On Some Foreign and Domestic Policy Issues of Middle Assyrian Empire" [*Mijinasorestanyan terut'yan artaqin ev nerqin qaxaqakanu'tyan vorosh harts'eri shurj*], The Countries and Peoples of the Near and Middle East, XXXI, 2018, 19-33 pp. (in Armenian)
2. **Ts'akanyan R.** "The State of Aššur from the Beginning of the 3rd Millennium BC to the End of the 15th Century BC". [*Ahhuri petut'uny m.t'.a. III hazaramyaki skzbnerits minchev m.t'.a. XV dari verjery*], "Scientific Works" of SCAS NAS of Armenia. Gyumri, 2023, V. 2 (26), 5-22 pp. (in Armenian)
3. **Ts'akanyan R.** "Assirian Woman According to Middle Assyrian Law" [*Ashshuruhin yst Mijinasorestanyan orenqneri*] Woman in the East:A Collection of Papers, IOS NAS RA,2023, Vo. 2, 230-264 p"p. (in Armenian)
4.– 40. (Տե՛ս **գրականություն)**

Ընդունվել է / Received on: **08. 03. 2025**
Գրախոսվել է / Reviewed on: **30. 04. 2025**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: 23**. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին՝

Ռուսլան Արշակի ՑԱԿԱՆՅԱՆ՝ պատմական գիտ. թեկնածու,
ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող, Երևան, ՀՀ
էլ. հասցե՝ rooslantsakanyan@gmail.com // orcid.org/0009-0003-6148-0933

Ruslan Arshak TSAKANYAN: PhD in History, Researcher of
the Institute of Oriental Studies NAS, Yerevan, RA
e-mail: rooslantsakanyan@gmail.com // orcid.org/0009-0003-6148-0933